ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№ 07/23.1/3964-18
«31» 05 2018 թ

«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՏԻԿԻՆ ՍԵԴԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ղուկասյան

Ի պատասխան Ձեր՝ 2018 թվականի մայիսի 18-ի գրությամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին ուղղված հարցադրումների (պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ)՝ ներկայացնում ենք նախարար Արծվիկ Մինասյանի պատասխանը:

«Իմ տեսակետը մնացել է անփոփոխ: Միաժամանակ կարծում եմ, որ անհրաժեշտ է իրականացնել խորը վերլուծություն համակարգում արդեն իսկ կուտակված միջոցների ազգային տնտեսության զարգացմանն ուղղելու հնարավորության վերաբերյալ:

Մյուս կողմից՝ համակարգի հետագա զարգացման ուղղությունների նախանշումը պետք է տեղի ունենա հանրային քննարկումների արդյունքում:

Ինչ վերաբերում է կառավարիչների գործունեությանը, ապա կարծում եմ, որ վերջիններիս գործունեությանը վաղաժամ է գնահատական տալ, դա կարելի կլինի անել համակարգի համապարփակ վերլուծության իրականացումից հետո:

Պարտադիր բաղադրիչի մասով, միանշանակ, համաձայն եմ այն պնդմանը, որ պարտադիր բաղադրիչի կիրարկումն անհրաժեշտ է առնվազն հետաձգել»:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Անժելինա Չիլինգարյան
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
011 597212